

# ՔԱՐՈՉԻՈՍԱԿԱՆ

Տ. ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ  
ՄԱՐԿԱՎԱԿԱԿԱՆ ԶԵՇՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
(3 հունիսի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգույն Սրբոյ. Ամէն»:

«Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրողի»:  
(Մատթ. ԺԱ 30)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր Մայր Տաճարի Ավագ Խորանին կատարվեց մի իրադարձություն հընթացս Սուրբ Պատարագի, որը նման չէ ամեն օրվա և կամ ամեն շաբաթ չի կրկնվում: Սիրելիներ, մեր Եկեղեցին պտղաբերեց Սուրբ Սեղանի ևս ուժ սարկավագ սպասավորներ, և ակամայից հիշեցի Տիրոջ այն խոսքերը, թե «Իմ լուծը քաղցր է և բեռն շատ թերթ»: Սակայն որքան էլ քաղցր է և թերթ, լուծը մնում է լուծ, և պետք է արժանապատվությամբ և ամենայն պատասխանատվությամբ կրել այն: Սիրելիներ, նախ մեկ անգամ ևս մեր մտքերի մեջ արթնացնենք և թարմացնենք այն զաղափարը, թե ինչ է նշանակում ծառայել, և ինչ է նշանակում կատարել սարկավագական պաշտոն:

Քրիստոսի Համբարձումից հետո աշակերտները, քրիստոնյաները, հավատավոր ժողովուրդը հավաքվում էին և ամեն անգամ աղոթքից հետո սիրո սեղան էին նստում, որոնց սպասավորության համար ընտրվեցին սարկավագներ: Եվ հետագայում է, որ ձևավորվեց աղոթքի կանոնավոր ընթացքը, Ս. Պատարագի ընթացքը, և այդ սպասավորները ազապեկ՝ սիրո ձաշերի սեղաններից դարձան Սուրբ Սեղանի սպասավորներ: Մեծ պատասխանատվություն և մեծ շնորհ՝ տրված Տիրոջ կողմից:

Սիրելիներ, այս պահին բոլորիս համար էլ ուրախության առիթ է, բոլորիս համար էլ միսիթարության ևս մեկ առիթ, և դիմելով ձեզ՝ կիսնդրեի բոլորիդ աղոթքները մեր նորընծա սարկավագների՝ խորանի սպասավորների համար, որովհետև ձեզ պետք է այս Սուրբ Խորանից մատուցեն Սուրբգրային ընթերցումները, Հաղորդության պատրաստմանն օգտակար լինեն և ձեզ Տիրոջ կենդանի ու կենդանարար Արյունն ու Մարմինը մոտեցնեն:

Սիրելիներ, այս առիթով ես ցանկանում եմ այսօր իմ որդիական խոնարհումը և շնորհավորանքները ուղղել Հայոց Հայրապետին, ով մեզանից երևի առավել ուրախ է այս և նման առիթներով, որովհետև Վեհափառի տեսիլքն է, ընթացքն է, որ մեր Եկեղեցին լրացնի այն մեծ քացը, որ առաջ է եկել նախորդ մի քանի տասնամյակների

ընթացքում՝ դաշտ, որին կոչված են սպասավորելու, հերկելու և պտուղները հավաքելու մեր սարկավագ եղբայրները։ Անդաստանն այդ շատ մեծ է և դեռևս հերկված չէ, և մենք մաղթում ենք իրենց կորով ու եռանդ, քանի որ այդ դաշտի մեջ իրենց արյան սերմերը քրիստոնեության ծլարձակման արմատավորման և պտղաբերության համար հեղեցին բազում սարկավագներ՝ սպասավորության օրինակ ունենալով առաջին սարկավագ Սուրբ Ստեփանոսին։ Նա չնշանավորվեց իր գեղեցիկ երգեցողությամբ, պատմության մեջ չմնաց, Քրիստոսի Եկեղեցու պատմության մեջ չմնաց իր ձայնով ու իր պերճախոսությամբ, այլ իր հավատարմությամբ, անմնացորդ սպասավորությամբ, և անկոտրուն հավատքի միջոցով նա հայտնի դարձավ մեզ և բոլոր ժամանակներին։ Եվ այդ սպասավորության ոգին ու կորովը մենք բոլորս մաղթենք մեր սարկավագ եղբայրներին։ Այսօր քաջ գիտակցում ենք նոր սերնդի, նոր սպասավորների անհրաժեշտությունը, և մենք այսօր իրենց շնորհավորում ենք, որովհետև զտան այդ քաջությունը՝ դիմադրելու և հաղթահարելու բոլոր դժվարությունները և պատնեշները՝ իրենց ուսին վերցնելով Քրիստոսի լուծը, լուծ, որ քաղցր է և «փոքրողի»։ Մաղթենք, որ մի օր Էլ իրենց ուսից այդ լուծը տեղափոխեն պարանոցին և այսպիսով համալրեն մեր Եկեղեցու օջալ հոգևորականաց շարքերը։

«Շնորհ, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս։ Ամէն»։